## Շահումը որոշելու կարգը, շահումների վճարման վայրը, կարգը և ժամկետը

1.Ակնթարթային մասի կազմակերպման և  անցկացման նկարագիրը:

Տոմսի՝ ակնթարթային մասով շահումը որոշելու համար մասնակիցը նախ պետք է մաքրի «Խաղաքար» խաղադաշտի պաշտպանիչ շերտը, այնուհետև՝ «Հաջողակ ուղի» խաղադաշտի՝ խաղաքարի կետերի քանակին համապատասխան թվի խաղավանդակի պաշտպանիչ շերտը: Իսկ շահումը կկազմի՝

1) «7» թիվը հայտնաբերելու դեպքում այդ խաղավանդակում նշված իրային կամ գումարային շահումը:

2) սիմվոլը հայտնաբերելու դեպքում տոմսը շահում է չշահագործված ավտոմեքենա, որի մակնիշը նշված կլինի «Ավտոմեքենա» խաղավանդակում:

3) սիմվոլը հայտնաբերելու դեպքում տոմսը շահում է որևէ իր, որի անվանումը նշված կլինի «Նվեր»  խաղավանդակում:

4) սիմվոլը հայտնաբերվելու դեպքում տոմսը շահում է ոսկու ձուլակտոր, որի քաշը  (1գր, 2գր, 5գր, 10գր, 20գր, 50գր) նշված կլինի «Ոսկի» խաղավանդակում:

5) սիմվոլը հայտնաբերվելու դեպքում տոմսը շահում է գումար, որի մեծությունը նշված կլինի «Սեյֆ» խաղավանդակում:

6) «X» սիմվոլը հայտնաբերելու դեպքում տոմսը չի շահում:

7) 1-6 և 8-13 թվերից որևէ մեկը հայտնաբերելու դեպքում մասնակիցը պետք է մաքրի «Հաջողակ ուղի» խաղադաշտի՝ տվյալ թվին համապատասխան խաղավանդակը ինչի արդյունքում, կախված մաքրված խաղավանդակի սիմվոլներից, կգործեն վերը նշված 1-7 ենթակետերով նախատեսված պայմանները:

Իրային շահումները ըստ խաղավանդակների կլինեն՝

1. «Ավտոմեքենա» խաղավանդակում՝ չշահագործված ավտոմեքենա՝ «Մերսեդես-Բենց» (Mercedes-Benz), «Վոլկսվագեն»  (Volkwagen), «Հյունդայի» (Hyundai), «Կիա» (Kia), «Մազդա» (Mazda) մակնիշի:
2. «Նվեր» խաղավանդակում՝ կամ կենցաղային տեխնիկա, կամ համակարգչային տեխնիկա, կամ ֆոտո/վիդեո/աուդիո տեխնիկա, կամ սպորտային գույք, կամ հեռահաղորդակցության տեխնիկա, կամ զվարճանքի տեխնիկա՝ միջոց:
3. «Ոսկի» խաղավանդակում՝ 999 հարգի 1գր, 2գր, 5գր, 10գր, 20գր, 50գր քաշի ոսկու ձուլակտոր:
4. Ուղևորություն:

«Հաջողակ ուղի» խաղադաշտի խաղավանդակում չի կարող լինել տվյալ խաղավանդակին համապատասխան թիվը:

Եթե «ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ» խաղադաշտի խաղավանդակներից որևէ մեկում հայտնաբերվի TV1-ից TV12 նշագրումներից որևէ մեկը, ապա «ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ»  վիճակախաղի տոմսին ակնարթային մասով որևէ շահում չի տրվի, սակայն տոմսն իրավունք ձեռք կբերի մասնակցել հեռուստախաղարկությանը:

Մնացած բոլոր դեպքերում տոմսը համարվում է չշահած:

«Հաջողակ ուղի» խաղադաշտում սիմվոլների տեղաբաշխումը կլինի այնպես, որ հստակ պարզ կլինի տոմսի շահող կամ չշահող լինելը:

Շահումների տեսակը նախատեսվում է գումարային և իրային:

**2.** Հեռուստախաղարկության մասի կազմակերպման և անցկացման նկարագիրը

«ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ» վիճակախաղի հեռուստախաղարկությունը իրականացվելու է 1-ից 12 թվերով համարակալված խաղաքարերով, որոնք ստուգվում և լցվում են հատուկ չթափանցող պարկի մեջ, որի դատարկ լինելը հավաստում են տվյալ վիճակահանության հանձնաժողովի անդամները: Վիճակահանությունն իրականացնելու համար պարկից հաջորդաբար հանվում է մեկ խաղաքար: Հեռուստախաղարկությունում շահում է այն տոմսը կամ տոմսերը, որում (որոնցում) «TV» գրառման կողքի թիվը համընկնում է պարկից հանված խաղաքարի թվի հետ: Եթե պարկից հանված խաղաքարով շահում չգրանցվի, ապա խաղաքարեր հանելը կշարունակվի այնքան, մինչև վերը նշված պայմանով կգրանցվի շահում: Հեռուստախաղարկության համար կազմակերպիչը կնախատեսի շահումային ֆոնդ, որը հավասարաչափ կբաշխվի վերոհիշյալ կարգով շահած տոմսերի միջև:

«ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ» վիճակախաղի խաղարկությունը կանցկացվի տարեկան առավելագույնը երկու անգամ:

### 3. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Տոմսը ենթակա չէ վճարման, եթե՝

ա. Տոմսն էականորեն վնասված է: Վնասվածքը համարվում է էական, եթե բացակայում է տոմսի որևէ հատված (այսինքն՝ տոմսն ամբողջական չէ):

բ. Կազմակերպչի կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ խախտված է տոմսի՝ շահելու պատահականության սկզբունքը, այսինքն՝ տոմսի վրա կատարվել է ֆիզիկա-քիմիական մեթոդների կամ տեխնիկական միջոցների կիրառում կամ ներկայացված տոմսը կեղծված է (առաջացնում է պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ):

գ. Մաքրված է տոմսի «Չջնջել» նշագրումով դաշտը:

4. Ակնթարթային մասի շահումները կտրվեն մինչև հեռուստախաղարկության մասի շահումների վճարման վերջին օրը ներառյալ:

Հեռուստախաղարկության մասի շահումները կտրվեն հեռուստախաղարկության կայացման հաջորդ օրվանից սկսած՝ 30 օրվա ընթացքում:

Շահումները կտրամադրվեն՝ ՀՀ, ք. Երևան, Ամիրյան 26, իսկ մանր (մինչև 20000 ՀՀ դրամ) շահումները նաև՝ ք.Երևան՝ Կոմիտասի 41, Գայի 15/10, Բագրատունյաց 7, Մաշտոցի պողոտա 7/14, Տ. Պետրոսյան 5/6, Մարգարյան 16, Անդրանիկի 73/2, Ռուբինյանց 18/4, Օհանովի 7/2, Կիևյան 4, Շիրազի 32 հասցեներից, «Հայ Փոստ» ՓԲԸ-ի, «Պրես Ստենդ» ՍՊԸ-ի և «Դիջիսեյլս» ՍՊԸ-ի իրացման կետերից, որոնց գտնվելու վայրերը (հասցեները) նշված են  https://rules.totogaming.am կայքի «Վիճակախաղերի շահումների վճարման վայրեր» բաժնում, որում նշված տեղեկատվությունը համարվում է «ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ» վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգի անբաժանելի մասը:

Անհրաժեշտության դեպքում շահող մասնակիցը պարտավոր է ներկայացնել անձնագիր կամ անձը հաստատող օրենքով նախատեսված այլ փաստաթուղթ:

**5.** Տոմսում չներառված մնացած պայմանները կարգավորվում են «ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ» վիճակախաղի կազմակերպման և անցկացման կանոնակարգով՝ համաձայնեցված ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

«ՀԱՋՈՂԱԿ ՈՒՂԻ» N 3 վիճակախաղի հեռուստախաղարկությունը կկայանա «Հ2» (Հայկական երկրորդ) (ք. Երևան, Աջափնյակ Գ-3  թաղ., 3/1 հասցե) հեռուստաալիքի ուղիղ եթերով  **31.05. 2019 թ.  ժամը  21:00-ին:**

Վիճակախաղի կազմակերպիչ՝ «ԴԻՋԻԳԵՅՄ» Սահմանափակ Պատասխանատվությամբ Ընկերություն:

**Գինը՝ 500 դրամ**   **ISL0320**

ARMENIA LOTTERY "Armenia  Lottery" «Արմենիա Լոթերի»

**060 67 22 22**

4 850012 310583